ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 104 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 794-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01533153) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2021 թվականի սեպտեմբերի 30-ի «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N 794-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վահագն Մելիք-Մարտիրոսյան Վիգենի» անհատ ձեռնարկատերի հետ (ՀՎՀՀ՝ 21304935) 2026 թվականի փետրվարի 16-ին կնքված՝ N 03ՓՎ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 14 հատ անջատիչի և 15 հատ ադապտերի ձեռքբերում՝ 4,724,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԷՆԵՐԳՈ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01018596) 2025 թվականի դեկտեմբերի 3-ին կնքված՝ N 03/12/25

պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևան քաղաքի Դեմիրճյան 20-22 հասցեում տեղադրված էլեկտրական ենթակայանի սարքավորումների երաշխիքային սպասարկման, տրանսֆորմատորային ենթակայանի միջոցով ժամանակավոր էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների ձեռքբերում և ժամանակավոր ենթակայանի հիմքի քանդման ու բետոնացման, հողանցման կոնտուրի, մալուխային խրամուղիների քանդման, մոնտաժման և տարածքից դուրս անհրաժեշտ արտաքին ցանցի կառուցման ու միացման աշխատանքների իրականացում, ինչպես նաև «Հայկական էլեկտրական ցանցերի» փակ բաժնետիրական ընկերության հետ բաժանորդագրության գործընթացների ապահովում՝ 49,403,805 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

03.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ